Վ. Ի. ՇԻՆԿԱՐՈՒԿ

ՄԱՐՔՍ-ԼԵՆԻՆՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Քննարկման առաջադրվող այս կամ այն հարցի լուծումը պետք է հիմնվի մարքսիզմ-լենինիզմի ուսմունքի ամբողջական ըմբռնման վրա, ուսմունք, որը տալիս է նոր՝ կոմունիստական աշխարհայացքի և իրականության հեղափոխական ճանաչողության ու վերափոխման գիտական մեթոդ։ Մեր կարծիքով մարքսիզմ-լենինիզմի ուսմունքի առաջ բերած աշխարհայացքային հեղափոխության բուն էությունը դեռևս ամբողջությամբ ըմբռնված չէ։ Անհրաժեշտ է տեսականորեն գիտակցել մարքսիզմ-լենինիզմի միասնական աշխարհայացքային-մեթոդաբանական հիմքը և նրա բաղկացուցիչ մասերի ընդհանուր նպատակը, բացահայտել դրանց ձևավորման ու փոխազդեցության, փոխպայմանավորվածության տրամաբանությունը, ի հայտ բերել անձի ազատ ու ներդաշնակ զարգացումն ապահովող պայմանների ստեղծման համար հասարակության հեղափոխական վերակառուցման գործնական խնդիրների տեսական լուծման նրա մարդասիրական ուղղվածությունը, փիլիսոփայության, քաղաքատնտեսության և գիտական կոմունիզմի մեթոդներով այդ խնդիրների լուծման առանձնահատկությունը։

Մարքսիզմի, որպես մի ամբողջական ուսմունքի, կառուցվածքում Վ. Ի. Լենինն առանձնացրել է գիտական դիալեկտիկամատերիալիստական աշխարհայացքը՝ որպես հեղափոխական ուսմունքի տեսական-մեթոդաբանական հիմք, ժամանակակից սոցիալիզմը՝ որպես բանվորական շարժման, դասակարգային պայքարի տեսություն և ծրագիր, ինչպես նաև մարքսիզմի տնտեսագիտական ուսմունքը։ Մարքսիզմի բուն փիլիսոփայական տեսության մեջ, ըստ Վ. Ի. Լենինի, հետևողական հեղափոխական աշխարհայեցողությունը բացահայտված է հետևողական պատմական մատերիալիզմի համակարգում, դիալեկտիկայում, որը գիտություն ու տեսություն է դասակարգային պայքարի, պրոլետարիատի՝ նոր, կոմունիստական աշխարհ ստեղծողի համաշխարհային-պատմական դերի մա-

սին[1]։ Դրանով էլ հենց մարքսիզմի գիտական փիլիսոփայության տեսական-մեթոդաբանական արժեքայնության բովանդակային վերլուծությունն ուղղվել է բնության, հասարակության և մտածողության գիտական իմացության պատմությանը և գիտակցական հեղափոխական պրակտիկայի, հեղափոխական-պրակտիկ գործունեության պատմությանը, քանի որ «Գիտությունը Մարքսի համար եղել է պատմականորեն շարժիչ, հեղափոխական ուժ»[2]։ Այսպիսի մոտեցումն արդարացված է նաև մարքս-լենինյան փիլիսոփայության առարկայի, հեղափոխական ճանաչողության մեջ և պրակտիկայում նրա ֆունկցիաների վերաբերյալ հարցը քննարկելիս։ Դրա լուծումը ենթադրում է աշխարհայացքի, փիլիսոփայության և գիտության հարաբերակցության լիակատար պարզաբանում։

Ի տարբերություն փիլիսոփայության և գիտության, որոնք առաջ են գալիս մարդկային հասարակության զարգացման միայն որոշակի պատմական փուլում աշխարհայացքն առաջանում է մարդու և մարդկային գիտակցության ծագման հետ միասին։ Մարդը մարդ էր դառնում հենց այնքանով, որքանով որ զարգացնում էր իր գործնական-վերափոխիչ վերաբերմունքը արտաքին բնական իրողության ու իր հասարակական կեցության պայմանների նկատմամբ։ Իրականության մարդկային վերափոխումը հիմնվում է նպատակադրման վրա, մի այնպիսի նոր իրողության կերպարի ստեղծման վրա, որը համապատասխանում է իրականում գոյություն ունեցողի մեջ պարունակվող հնարավորություններին։ Այդ պատճառով էլ մարդկային գիտակցությունը հենց սկզբից նպատակաուղղված է իրականության՝ ոչ թե սոսկ իբրև առկա գոյի, այլ որպես հնարավորության արտացոլմանը։ Մարդկային գիտակցության գործնական նպատակաուղղվածությունն ամեն անգամ արտացոլվում է «Ինչպե՞ս կարելի է անել» և «ի՞նչ կարելի է անել», «ի՞նչ կերպ կարելի է անել» հարցերի մեջ։

Եթե ելնենք լենինյան այն դրույթից, որ մարդկային գիտակցությունը ոչ միայն արտացոլում է աշխարհը, այլև ստեղծում է այն, ապա գիտակցությամբ ստեղծվող աշխարհը հասարակական մարդու պահանջմունքների ու շահերի տեսակետից հնարավորի և հարկավորի աշխարհն է։ Օբյեկտիվորեն գոյություն ունեցողի և հնարավորի, եղածի ու ցանկալիի երկատելուց է, որ առաջ է գալիս այն հարցը, թե ի՞նչ բան է աշխարհը։ Ինչպիսի՞ն է գիտակցության մեջ ստեղծագործվող, հարկավոր աշխարհի հարաբերությունը արտաքին անհրաժեշտությունների աշխարհի նկատմամբ։ Սա է կեցության նկատմամբ մտածողության, գիտակցության հարաբերության մասին աշխարհայացքային հարցի արմատը։

Սակայն մարդկային գիտակցությունը նպատակաուղղված է ոչ միայն բնական իրողության առարկայական աշխարհին։ Նրա առարկան ոչ թե պարզապես աշխարհն է, այլ մարդու հետ հարաբերակցվող աշխարհը և աշխարհի հետ հարաբերակցվող մարդը, ընդ որում մարդը՝ վերցված իբրև սեռ, որի նկատմամբ անհատն իրեն դասում է որպես տեսակ և որի հետ նա համեմատում է իր գործողությունները։ Աշխարհայացքն առաջանում է ոչ միայն այն հարցադրումից, թե ինչ է աշխարհը, այլև այն, թե ինչ է մարդը։ Ե՛վ մեկը, և՛ մյուսը նպատակաուղղված են գործողությանը։

Այսպիսով, աշխարհայացքն առաջ է գալիս աշխարհի, մարդու և հասարակության նկատմամբ մարդու պրակտիկ հարաբերությունների ամբողջ տարրապատկերից։

Աշխարհայացքը մարդու գիտակցության մեջ իրականության արտացոլման հասարակայնորեն մշակված ձևն է և աշխարհայացքի սուբյեկտի (հասարակության, դասակարգի, անձի) ինքնորոշման եղանակը։ Աշխարհայացքն իր արմատներն ունի մարդու հասարակական-պրակտիկ բնության մեջ, գիտակցության ստեղծագործական էության մեջ, իր կենսագործունեությունն իր կամքի, իր գիտակցության առարկա դարձնելու մարդու ունակության մեջ, այսինքն՝ գործունեության սուբյեկտի ինքնագիտակցման մեջ։ Աշխարհայացքը, որպես հասարակական ինքնագիտակցության ձև, մշակում է եղած իրականության, մարդկային կեցության իմաստի, հասարակական ու անհատական կենսագործունեության զարգացման հեռանկարների, իդեալների, դրանց ապագա իրականացման միջոցների ու եղանակների ընդհանուր ըմբռնումն ու գնահատականը։ Այն մարդկային գիտակցության համահավաք գիծն է, մարդու էությանը բնորոշ բոլոր կարողությունների՝ բանականության, զգացմունքների ու կամքի ածանցյալը։ Աշխարհայացքը գիտելիքների սոսկ համախումբ չէ, այլև, դրա հետ միասին, մարդու սոցիալական զգացմունքները, ավելի ստույգ՝ մարդու սոցիալական զգացմունքներով հավաստվող գիտելիքները, մտքերը, պատկերացումները։ Այդ պատճառով էլ աշխարհն այնպես ինչպես այն աշխարհայացքում է ներկայանում, հավասարապես և մարդն ինքն այդ աշխարհում, զգացվում ու հաստատվում են որպես իրողություն։ Մարդու ֆունկցիան է աշխարհում իր ինքնորոշումն ու ինքնահաստատումը, որը պետք է համապատասխանի այդ աշխարհի, ինչպես նաև նրանում իր ունեցած տեղի ու մասնակցության սոցիալապես մշակված ըմբռնմանը, աշխարհում կատարվող իրադարձությունների այս կամ այն գնահատականի նկատմամբ, իր կենսագործունեության որոշակի նպատակների ու միջոցների ընտրության նկատմամբ աշխարհայացքային

դիրքորոշման ձևավորումը։ Աշխարհը բացահայտվում է մարդուն վերջինիս աշխարհայացքի միջոցով, և այն, թե ինչպիսին է այդ աշխարհը ներկայանում մարդուն, կախված է այդ աշխարհայացքից։

Այդ առումով աշխարհայացքն աշխարհը «յուրացնելու» միջոց է։ Եվ ոչ միայն այն իմաստով, որ աշխարհայացքը տալիս է աշխարհի իմացությունը, նրա ըմբռնումն ու տեսահորիզոնը, այլև այն իմաստով, որ աշխարհայացքի մեջ աշխարհը ներկայանում է մարդու պրակտիկ և հոգևոր գործունեությամբ միջնորդավորված, իր վերափոխված տեսքով։ Աշխարհայացքը պարզապես աշխարհըմբռնում չէ, այլև աշխարհի վերափոխման գործիքն է և, միաժամանակ, այդ վերափոխման արդյունքը։

Ինչպես որ աշխարհի նյութական վերափոխման նպատակը մարդու նկատմամբ նրա «օտարվածության» հաղթահարելն է, այն մարդկային կենսական նպատակների ու պահանջմունքների իրականացման աշխարհի վերածելը, այնպես էլ աշխարհայացքում աշխարհի պրակտիկ-հոգևոր յուրացումը նշանակում է ոչ միայն մարդուն «օտար» աշխարհի կերպարների, այլև նրա կենսական նպատակների, հույսերի ու ակնկալությունների ազատ կենսագործման մի աշխարհի, ինչպես նաև աշխարհի այդ «վիճակին» հասնելու միջոցների ստեղծում։ Աշխարհի պրակտիկ-հոգևոր յուրացումը կարծես թե շարունակում, լրացնում (իսկ երբեմն նաև փոխարինում է նրա «պրակտիկ-նյութական» յուրացմանը։ Գիտական, դիալեկտիկամատերիալիստական աշխարհայացքում ապագան առաջին անգամ է հանդես գալիս որպես աշխատավորական զանգվածների գիտակցական, հեղափոխական պրակտիկայի գործ, որը հիմնվում է հասարակական զարգացման օրենքների ճանաչողության, գիտական կանխատեսության, համակողմանի հիմնավորված սոցիալիստական ու կոմունիստական իդեալի վրա։

* * *

Փիլիսոփայությունը ձևավորվել է որպես ճանաչողության մի բնագավառ, որի առարկան ողջ այն պրոբլեմատիկան է, որն առաջադրում է աշխարհայացքային գիտակցությունը։ Ուսումնասիրելով գիտակցության հարաբերությունը օբյեկտիվ աշխարհին, մտածողության հարաբերությունը կեցությանը՝ փիլիսոփայությունն իր առարկան է դարձնում այն պրոբլեմատիկան, որն առաջ է գալիս աշխարհայացքի, որպես հասարակության, նրա առաջատար խավերի ու դասակարգերի գիտակցության և ինքնագիտակցության զարգացման հիմքի վրա։ Դա չի նշանակում, որ փիլիսոփայությունը լուծում է միայն այն խնդիրները, որոնք նրան առա-

ջադրում է առօրյա աշխարհայացքային գիտակցությունը, որը գոյանում է նրանից դուրս, հասարակական կյանքի անմիջական պրակտիկայի հիման վրա։ Որպես աշխարհայացքային գիտելիքների տեսական զարգացման ձև, փիլիսոփայությունն ընդունակ է ու կոչված առաջ անցնելու առօրեական աշխարհայացքային գիտակցության ճանաչողական գործունեությունից, տեսականորեն առաջադրելու այնպիսի աշխարհայացքային պրոբլեմներ, որոնք արտացոլում են հասարակական պրակտիկայում կատարվող պատմական տեղաշարժերը դեռևս մինչև դրանց արտահայտվելը «արտափիլիսոփայական» աշխարհայացքում։ Այս ամենով հանդերձ, փիլիսոփայությունը ծագում ու զարգանում է աշխարհայացքի զարգացման «ուղիներում», աշխարհայացքային պրոբլեմատիկայի յուրացմամբ, առաջադրմամբ ու տեսական լուծմամբ։

Փիլիսոփայական ճանաչողության օբյեկտի յուրօրինակությունն այն է, որ միավորում է, միաժամանակ, և՛ գիտակցությունը (մտածողությունը)՝ օբյեկտիվ աշխարհի նկատմամբ իր հարաբերություններով, և՛ օբյեկտիվ աշխարհը՝ գիտակցության (մտածողության) նկատմամբ իր հարաբերություններով։ Այդ հարաբերությունները գոյացել են հասարակական-պատմական պրակտիկայի ընթացքում, որը ձևավորել է մարդկային մտածողությունը, առանձնացնելով համընդհանուր և անհրաժեշտ կապերն օբյեկտիվ աշխարհում և դրանք վերածելով մտքի ձևերի (կատեգորիաների)։ Մտածողության ու կեցության միասնությունն էլ հենց այդ կատեգորիալ ձևերի համընկնումն է։

Այս առումով փիլիսոփայությունը մարդկային մտածողության, նրա օբյեկտիվ բովանդակության կատեգորիալ կառուցվածքի տեսական յուրացումն է, կեցության այն ձևերի հասկացութային իմացությունը, որոնք ամրագրվում են մտածողության մեջ տրամաբանական կատեգորիաներով։ Ուստի բնական է, որ փիլիսոփայական ճանաչողությունը համընդհանուրի ճանաչողությունն է, աշխարհի ըմբռնումն իր համապարփակ ձևերում, ինչն էլ վերջին հաշվով փիլիսոփայությունը դարձրել է գիտություն աշխարհի շարժման ու զարգացման և նրա ճանաչողության համընդհանուր օրենքների մասին։

Փիլիսոփայությունն աշխարհայացքից տարբերվում է նրանով, որ աշխարհի ոչ թե «պրակտիկ-հոգևոր», այլ տեսական յուրացումն է։ Այս առումով փիլիսոփայությունը բուն աշխարհայացքը չէ, այլ նրա տեսական արտահայտության ու զարգացման ձևն է սոսկ։ Բայց աշխարհայացքային պրոբլեմատիկան լուծելով իր տեսական միջոցներով, և դրանով իսկ, հասարակական գիտությանը մատակարարելով տեսականորեն մշակված աշխարհայացքային գիտելիքներ, փիլիսոփայությունն ինքը

հասարակայնորեն գործառում է իբրև աշխարհայացքային գիտելիքների մի համակարգ, կատարում է տեսականորեն մշակված աշխարհայացքի ֆունկցիա, հանդես գալիս իբրև աշխարհայացքի տեսական զարգացման մի եղանակ, որը կազմակերպում և ընդհանրացնում է գիտական գիտելիքի համակարգը՝ այն դարձնելով գիտական աշխարհայացք, հասարակական գիտակցության ձև։

Մարքս-լենինյան աշխարհայացքը աշխարհի պրակտիկ-տեսական յուրացումն է, քանի որ այն կապիտալիզմի հեղափոխական ոչնչացման, սոցիալիզմի ու կոմունիզմի կառուցման գիտական տեսությունն է։ Գիտական կոմունիզմի գաղափարները մարքս-լենինյան աշխարհայացքի միջուկն են և նրա բովանդակությունը բնորոշում են իբրև հենց կոմունիստական աշխարհայացք։ Այդ աշխարհայացքը մարդուն կողմնորոշում է դեպի հասարակական կյանքի պրակտիկ վերափոխումն՝ ըստ նրանում գոյություն ունեցող ու զարգացող հնարավորությունների, զինում նրան այդ հնարավորությունները բացահայտելու գիտական մեթոդաբանությամբ, ամբողջ հասարակական կյանքը գիտակցաբար կառավարելու միջոցներով։

Փիլիսոփայության աշխարհայացքային էությունն իրենով պայմանավորում է նրա դասակարգային բնույթը։ Ինչպես ամեն մի աշխարհայացք, փիլիսոփայությունն իրականությունն արտացոլում է հասարակական մարդու կենսական նպատակների ու շահերի պրիզմայով։ Այդ պատճառով դասակարգային հասարակության մեջ, որտեղ այդ կենսական նպատակներն ու շահերը բևեռանում են և հանդես գալիս որպես միմյանց ընդդիմակա դասակարգերի կենսական նպատակներ ու շահեր, որտեղ աշխարհայացքային դիրքորոշումն այսպես թե այնպես որոշվում է դասակարգային դիրքորոշմամբ, փիլիսոփայական ճանաչողությունն ունի գաղափարական ուղղվածություն, ենթարկված է դասակարգային պայքարի նպատակներին, առաջադիմական կամ հետադիմական դասակարգերի սոցիալական ձգտումների հաստատմանն ու գաղափարախոսական հիմնավորմանը։ Այստեղից էլ փիլիսոփայական ուսմունքների գաղափարախոսական բևեռացումը տարբեր ու հակադիր ուղղությունների, վերջին հաշվով՝ մատերիալիզմի և իդեալիզմի, որոնց պայքարը փիլիսոփայության պատմության ընթացքի հիմնական բովանդակությունն է։

Փիլիսոփայական ճանաչողության գաղափարական, դասակարգային ուղղվածությունը պայմանավորել է այն հանգամանքը, որ օբյեկտիվ-ճշմարիտ գիտելիքի որոնումն այստեղ մշտապես ընթանում էր ավելի բարդ ուղիներով, քան այն ճանաչողության մեջ, որն անմիջականորեն կապված չէ աշխարհայացքային պրոբլեմատիկայի լուծման հետ։ Փի-

լիսոփայության մեջ ճշմարտությունը ձեռք է բերվել ու զարգացվել պատմականորեն առաջադիմական դասակարգերի գաղափարախոսությունն արտահայտող առաջավոր փիլիսոփայական ուսմունքների սուր պայքարում՝ ընդդեմ այն աշխարհայացքային կոնցեպցիաների, որոնք սպասարկում են հետադիմական կամ պահպանողական դասակարգերի շահերը, պատրանքային հակագիտական պատկերացում տալով իրականության մասին։ Այդ պայքարը կուտակել է փիլիսոփայական ճանաչողության նվաճումները փիլիսոփայական մատերիալիզմի ու դիալեկտիկայի զարգացման մեջ, որոնք պատմական տարբեր ժամանակաշրջաններում տարբեր ձևեր են ընդունել ու դիալեկտիկամատերիալիստական աշխարհըմբռնման են վերածվել պրոլետարիատի գիտական գաղափարախոսության մշակման, մարքս-լենինյան փիլիսոփայության ստեղծման հիման վրա։

Թեպետև իր էությամբ, իր կոչմամբ փիլիսոփայությունը սկզբից ևեթ հանդիսացել է հասարակական գիտակցության ձև, բայց իր այդ ֆունկցիան կարողացել է իրագործել միայն գիտական փիլիսոփայություն դառնալով ու աշխատավորական զանգվածների գիտակցությանը տիրապետելով։

* * *

Մարքսիզմ-լենինիզմի դասականների ասույթները փիլիսոփայության առարկայի, փիլիսոփայության և մասնավոր գիտությունների հարաբերության, մարքս-լենինյան փիլիսոփայության կառուցվածքի, պատմության մատերիալիստական ըմբռնման էության մասին պետք է քննել՝ հաշվի առնելով մարքս-լենինյան փիլիսոփայության պատմական ձևավորման ու զարգացման տրամաբանությունը, այդ պրոցեսի արտացոլումը գիտական ճանաչողության այս կամ այն պրոբլեմի լուծման, հեղափոխական պրակտիկայի մեջ, հաշվի առնելով մարքսիզմ-լենինիզմի դասականների այս կամ այն աշխատության ընդհանուր համատեքստը։ Այսպես, Ֆ.Էնգելսի այն ասույթը, թե «Հենց որ յուրաքանչյուր առանձին գիտության առաջ պահանջ է դրվում՝ պարզել իր տեղը իրերի և դրանց մասին եղած գիտելիքների ընդհանուր կապակցության մեջ, այդ ընդհանուր կապակցմամբ զբաղվող որևէ հատուկ գիտություն ավելորդ է դառնում։ Եվ այդ դեպքում նախկին ամբողջ փիլիսոփայությունից իր ինքնուրույն նշանակությունը պահպանում է միայն մտածողության ու նրա օրենքների ուսմունքը՝ ձևական տրամաբանությունն ու դիալեկտիկան։ Ամբողջ մնացածը մտնում է բնությանը և պատմությանը վերաբերող դրական գիտության մեջ»[3], պետք է հասկացվի որպես մի մոմենտ այն հարցի լուծման մեջ, թե ինչպես են կապված մատերիալիզմի, իբրև գիտական մեթոդի

և աշխարհայացքի, պատմական ձևերը, ընդհուպ մինչև դիալեկտիկական և պատմական մատերիալիզմը, և բնության ու պատմության մասին էնգելսին ժամանակակից գիտությունը, ինչպես նաև որպես պատասխան այն հարցին, թե որն է փիլիսոփայության՝ իբրև դիալեկտիկական մտածողության օրենքների, դիալեկտիկայի մեթոդի մասին առանձին գիտության առարկան։ Մարքս-լենինյան փիլիսոփայությունը, հենց որպես դիալեկտիկայի մասին գիտություն (որի կառուցվածքի վրա կանգ կառնենք հատկապես), կատարում է բնության ու պատմության վերաբերյալ ժամանակակից գիտության աշխարհայացքային և մեթոդաբանական հիմքի դեր։ «Դա արդեն ընդհանրապես այլևս փիլիսոփայություն չէ, այլ պարզապես մի աշխարհայացք, որն իր հաստատումը պետք է գտնի և արտահայտվի ոչ թե գիտությունների մի հատուկ գիտության մեջ, այլ ռեալ գիտությունների մեջ։ Այսպիսով, փիլիսոփայությունը այստեղ «վերառված է», այսինքն՝ «միաժամանակ և՛ հաղթահարված է, և՛ պահպանված», հաղթահարված է ըստ ձևի և պահպանված՝ ըստ իր իրական բովանդակության»[1]։

Դիալեկտիկական և պատմական մատերիալիզմն իբրև գիտություն երկու տարբեր մատերիալիզմներ չեն, այլ միևնույն մարքսիստական մատերիալիզմի երկու բնորոշումները, երկու որոշակիություններն են։ Մատերիալիզմը մինչև վերջ հետևողական դիալեկտիկական մատերիալիզմ է դառնում հենց այն բանով, որ պատմական մատերիալիզմ է դառնում։ «Մատերիալիզմը մինչև վերջ կառուցելուն» (այսինքն՝ պատմական մատերիալիզմի ստեղծմանը) համեմատ կատարվել է նաև դիալեկտիկայի մատերիալիստական վերամշակում՝ ձևավորվել է դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի ամբողջական փիլիսոփայական աշխարհայացքը։

Կ. Մարքսը, Ֆ. Էնգելսը և Վ. Ի. Լենինը դիալեկտիկայի սկզբունքներն ու օրենքները դուրս են բերել հասարակական-պատմական պրոցեսների (բուրժուական հասարակության օբյեկտիվ հակասությունների, դասակարգային պայքարի, սոցիալական հեղափոխության օրենքների և այլն) տեսական ընդհանրացումից և բնագիտության զարգացման փորձից, նրա նորագույն հայտնագործություններից։ Որպես արդյունք, այդ օրենքները հանդես են գալիս իբրև կեցության և ճանաչողության համապարփակ կապեր, որպես բնության, հասարակության և մտածողության զարգացման համընդհանուր օրենքներ։ Դիալեկտիկան, որպես փիլիսոփայական գիտություն, գոյաբանական, իմացաբանական ու տրամաբանական բովանդակություն ունեցող կատեգորիաների, օրենքների և սկզբունքների մի բարդ տեսական համակարգ է։ Իր այդ տարաբնույթ

բովանդակության մեջ այն հանդես է գալիս որպես խիստ աստիճանակարգված միասնություն, որն ընդգրկում է դիալեկտիկան, իբրև զարգացման տեսություն (ուսմունք բնության, հասարակության և մտածողության զարգացման համընդհանուր օրենքների մասին), դիալեկտիկամատերիալիստական իմացաբանությունը (ուսմունք սուբյեկտի և օբյեկտի ճանաչողական հարաբերությունների մասին, որպես ճշմարտությանն իր պատմական զարգացման մեջ հասնելու աստիճանների) և դիալեկտիկական տրամաբանությունը (ուսմունք հակասաբար զարգացող իրականության ըմբռնման տրամաբանական ձևերի ու եղանակների մասին)։

Միասնական դիալեկտիկամատերիալիստական գիտության համակարգում այդ տեսական կառուցվածքների հարաբերակցության, փոխադարձ կապի ու աստիճանակարգության ճիշտ ըմբռնումը մեթոդաբանական և աշխարհայացքային սկզբունքային նշանակություն ունի։

Դրանք համընկնում են այն բանում, որ բոլոր երեք տեսությունների օբյեկտիվ բովանդակությունն էլ վերջին հաշվով հանգում է ամբողջ գոյի զարգացման, միևնույն համապարփակ օրենքների հետազոտմանը։ Դիալեկտիկան, որպես զարգացման տեսություն, լայն իմաստով գիտություն է իրականության բոլոր բնագավառների, այդ թվում նաև ճանաչողության զարգացման օրենքների մասին, հետևաբար և ներառում է նաև իմացաբանությունը և տրամաբանությունը։ Ավելի նեղ իմաստով այն զարգացման համապարփակ, իրականության բոլոր բնագավառների համար միասնական օրենքների տեսություն է։ Ի տարբերություն այս վերջինի, դիալեկտիկան որպես ճանաչողության տեսություն (իմացաբանություն) հետազոտում է իրականության որոշակի բնագավառ, այն է սուբյեկտի ճանաչողական հարաբերությունները օբյեկտի նկատմամբ իրենց պատմական ու անհատական զարգացման մեջ՝ որպես ճշմարտության իմացության աստիճաններ։ Իսկ դիալեկտիկական տրամաբանությունը հետազոտում է այդ աստիճանները՝ որպես ճանաչող մտածողության (հասկացությունների, տեսությունների և այլն) մեջ օբյեկտիվ դիալեկտիկայի արտացոլման տրամաբանական ձևեր (մտածողության կատեգորիաները) և օրենքներ (սկզբունքները)։ Դրանց տարբերությունն այն է, որ դրանք տարբեր տեսանկյունից են ուսումնասիրում միևնույն երևույթը, բացահայտում իրականության տարբեր ոլորտներում միևնույն երևույթի (համընդհանուր օրենքների) գործողության տարբեր եղանակները։

Դիալեկտիկայի, տրամաբանության և ճանաչողության տեսության միասնության մասին լենինյան գաղափարի էությունն այն է, որ փիլի-

սոփայական գիտելիքի այդ տեսանկյուններից յուրաքանչյուրը չի կարելի մշակել ու շարադրել առանց մյուսի հետ հարաբերակցման, կողք-կողքի։ Դիալեկտիկայի սկզբունքները միաժամանակ և՛ աշխարհի զարգացման օրենքներն են, և՛ ճանաչողական սկզբունքները, և՛ մտածողության տրամաբանական ձևերը։ Դիալեկտիկայի «եռամիասնության» մասին լենինյան բանաձևը («հարկավոր չէ երեք բառ») վերաբերում է ոչ թե դիալեկտիկային, որպես զարգացման տեսություն այդ հասկացության լայն իմաստով, այլ դիալեկտիկական տրամաբանությանը։ Մարքսիստական դիալեկտիկական մեթոդը մարքսիստական դիալեկտիկական տրամաբանությունն է իր պրակտիկ օգտագործման մեջ, «բուն դիալեկտիկան է որպես փիլիսոփայական գիտություն», «...ուսմունք մտածողության բուն պրոցեսի օրենքների մասին, տրամաբանություն և դիալեկտիկա»[5]։ Դիալեկտիկայի, տրամաբանության և ճանաչողության տեսության էական միասնությունը դիալեկտիկական մատերիալիզմում հիմնվում է աշխարհի մատերիական միասնության և նրա զարգացման գաղափարների վրա, որոնք դիալեկտիկամատերիալիստական աշխարհըմբռնման հանգուցային մոմենտներ են։

Հասարակության պատմության նկատմամբ նշված սկզբունքների կիրառությունն իրենց օրգանական միասնության մեջ հասցրեց պատմության մատերիալիստական ըմբռնմանը, հասարակական զարգացման օբյեկտիվ օրենքների բացահայտմանը և գիտական սոցիալիզմի տեսության մշակմանը։ Պատմության մատերիալիստական ըմբռնումը մարքսիստական իմացաբանության տեսական բաղիսն է, իսկ մարքսիստական իմացաբանությունը, իր հերթին ուսումնասիրելով մարդու ճանաչողական գործունեության ամբողջ ոլորտը՝ վերցրած իր պատմական զարգացման մեջ, մարքսիստական դիալեկտիկական տրամաբանության իմացաբանական հիմքն է։ Իր հերթին դիալեկտիկական տրամաբանությունը, որպես մտածողության դիալեկտիկական եղանակի տեսություն, պատմական մատերիալիզմի և մարքսիստական իմացաբանության տրամաբանական-մեթոդաբանական հիմքն է։ Դիալեկտիկական և պատմական մատերիալիզմն իր պրակտիկ, կոմունիստական նպատակուղղվածությամբ հանդիսանալով կոմունիստական աշխարհայացքի փիլիսոփայական միջուկը, իր կոնկրետացումն ու դրանով իսկ հիմնավորումն է գտնում մարքսիզմ-լենինիզմի համակարգում, մարքս-լենինյան քաղաքատնտեսության և գիտական կոմունիզմի մեջ։

Գիտական դիալեկտիկան, որպես զարգացման տեսություն, հիմնվում է հասարակական զարգացման օբյեկտիվ օրենքների բացահայտման, հասարակության պատմության մասին մատերիալիստական ուսմունքի

ստեղծման, գիտական սոցիալիզմի, կոմունիզմի տեսության վրա։ Հենց սրանցում է մատերիալիստական դիալեկտիկան գտնում իր կոնկրետ աշխարհայացքային բովանդակությունը՝ որպես զարգացման տեսություն, ու արդյունավետ իրագործում տրամաբանության և ճանաչողության տեսության իր ֆունկցիաները։

«Մատերիալիստական դիալեկտիկայի կիրառումը ամբողջ քաղաքատնտեսության վերամշակման նկատմամբ սկսած նրա հիմքից՝ պատմության, բնագիտության, փիլիսոփայության, բանվոր դասակարգի քաղաքականության ու տակտիկայի նկատմամբ— ահա թե ինչն է ամենից շատ հետաքրքրում Մարքսին ու Էնգելսին, ահա թե ինչումն են նրանք ներդնում ամենից էականն ու ամենից նորը, ահա թե որն է նրանց հանճարեղ առաջընթաց քայլը հեղափոխական մտքի պատմության մեջ»[6]։

Դրանով իսկ բացահայտվում է մարքս-լենինյան տեսության համակարգի ելակետային սկզբունքների, ծավալման մեթոդաբանության միասնությունը, որի հիմքում ընկած է դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի փիլիսոփայությունը որպես «...Դիալեկտիկական մեթոդի և կոմունիստական աշխարհայացքի»[7] «...մատերիալիստական-դիալեկտիկական աշխարհայեցողության»[8] շարադրանք։

* * *

Գիտության իդեալն է այնպիսի գիտելիքը, որը լիովին բացառում է ճանաչող սուբյեկտին։ Այն ձգտում է ստեղծել օբյեկտի մոդելը, որի մեջ լիովին բացառված լինի սուբյեկտից եկող ամեն բան։ Իհարկե, գիտությունը երբեք չի կարող հասնել այդ իդեալին, քանի որ ինչքան շատ է նա խորանում օբյեկտի մեջ, այնքան ավելի բարդ են դառնում նրա արտացոլման, վերացարկման ու համադրման ձևերը։ Եվ միայն արդյունքի, «գումարի», վերացարկումների համակարգի մեջ է գիտությունը հասնում օբյեկտին իր օբյեկտիվ հատկություններով։

Հակասությունն այն է, որ ձգտելով տալ օբյեկտի՝ սուբյեկտից լիովին հեռացած պատկերը, գիտությունն իր ամեն շարժումով կրկին ծնում է օբյեկտիվի նկատմամբ սուբյեկտիվի հարաբերության պրոբլեմը։ Ամեն նոր օբյեկտ ենթադրում է իր ըմբռնման նոր ձևերի մշակում։ Եվ այդ ժամանակ անհրաժեշտ է դիմել գիտելիքների ամբողջ ծավալին, որը կենտրոնանում է փիլիսոփայության սկզբունքների ու կատեգորիաների մեջ։ Այդ պատճառով էլ գիտական ճանաչողությունը չի կարողացել ու երբեք չի կարող ռեալ գոյություն ունենալ առանց փիլիսոփայության, որովհետև գիտական ճանաչողությունն ինքն է յուրաքանչյուր նոր փուլում

ծնում այնպիսի պրոբլեմ, որը կապված է իրականության իմացության փիլիսոփայական եղանակի հետ։

Այդ առումով փիլիսոփայությունը գիտության ընդհանուր մեթոդաբանությունն է ու նրա տեսական ինքնագիտակցությունը։ Այն գիտությունից դուրս չէ, այլ նրա օրգանական բաղադրամասն է ու դրա հետ միասին, որպես աշխարհի ու նրա ճանաչողության շարժման և զարգացման համընդհանուր օրենքների հասկացութային-կատեգորիալ գիտելիք, օբյեկտիվորեն ճշմարիտ և գիտականորեն հիմնավորված իմացություն, նա գիտության ստեղծողն է։

Սակայն մարքսիստական-լենինյան փիլիսոփայության՝ դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի առաջացման ու զարգացման աստիճանում էլ փիլիսոփայությունը պահպանում է հասարակական գիտակցության առանձին ձևի իր նշանակությունը և տարբերվում գիտությունից այն իմաստով, որ այն աշխարհայացքի տեսական զարգացման եղանակ է, գիտական գիտելիքի համակարգը գիտական աշխարհայացքի, հասարակական գիտակցության ձևի վերածելու և ընդհանրացնելու միջոց։ Գիտական ճանաչողության մեջ փիլիսոփայությունը մեթոդաբանական ֆունկցիա է կատարում իր աշխարհայացքային գիտելիքների ամբողջ համակարգով, ընդ որում՝ դրանց միջոցով կազմակերպված կոնկրետ գիտական աշխարհայացքային գիտելիքի հետ միասնության մեջ։ Այստեղ ևս պետք է ընդգծել, որ փիլիսոփայությունը կարող է կատարել գիտական ճանաչողության ընդհանուր մեթոդաբանության ֆունկցիա, քանի որ հասարակական գիտակցության ձև է, տեսականորեն զարգացած աշխարհայացք։ Ճանաչողության սուբյեկտի գիտակցության մեջ այն որպես մեկ միասնություն է սինթեզում աշխարհի պատկերը և նրանում ճանաչողության օբյեկտի առանձնացումը ոչ միայն անցյալի գիտական փորձի, այլև ողջ հոգևոր մշակույթի՝ գեղարվեստականի, բարոյականի և բուն աշխարհայացքայինի նվաճումները։

Առանձին ճանաչող անհատի նկատմամբ գիտությունը և փիլիսոփայությունը, որպես հասարակական գիտակցության ձև, գոյություն ունեն առանձին-առանձին, կողք-կողքի, բայց միայն այն ժամանակ, երբ նա դրանք ուսումնասիրում կամ դարձնում է իր խորհրդածության (ռեֆլեքսիայի) առարկա։ Իսկ երբ նա զբաղված է գիտական որոնումով կամ մտորում է աշխարհում այս կամ այն իրադարձության մասին, յուրացված փիլիսոփայական և կոնկրետ-գիտական աշխարհայացքային գիտելիքները ենթագիտակցաբար գործում են որպես նրա տեսական գիտակցություն։ Եվ հենց այդ պատճառով, որ դրանք նրա գիտակցությունն են,

նրա Ես-ի անօրգանական բնության մեջ են մտել, նա այդ մասին չգիտի, այդ բանը չի գիտակցում։ Այստեղ մենք գործ ունենք անմիջական գիտակցության և այդ գիտակցության գիտակցման տարբերության երևույթի հետ։ Պրակտիկայում հնարավոր են այնպիսի իրավիճակներ, երբ սուբյեկտը, ղեկավարվելով որոշակի աշխարհայացքային սկզբունքներով և չգիտակցելով այդ, հայեցողության մեջ դրանց վերաբերվում է որպես իրենից օտարված մի երևույթի։ Դրա հետ է կապված աշխարհայացքային որոշակի չտարբերակվածությունը (սինկրետությունը), նրա ներբախումներն ու հակասությունները, որոնք հատուկ են առանձնապես հակամարտ դասակարգային հասարակությանը։ Այդ հակասությունների հաղթահարումը հնարավոր է ժամանակակից գիտության օբյեկտիվ բովանդակությանը համապատասխան փիլիսոփայության և առաջավոր, սոցիալիստական հոգևոր մշակույթի յուրացմամբ։

Մարքսիզմ-լենինիզմի, որպես աշխարհը աշխատավորական զանգվածների օգտին հեղափոխականորեն վերափոխելու տեսության և պրակտիկայի, առաջացումով գիտական փիլիսոփայական ճանաչողության արդյունքները դառնում են այդ զանգվածների սեփականությունը, հանդես են գալիս որպես նրանց գիտական կոմունիստական աշխարհայացքի ձևավորման տեսական միջոցներ։

В. И. ШИНКАРУК

К ВОПРОСУ О ПРЕДМЕТЕ МАРКСИСТСКО-ЛЕНИНСКОЙ ФИЛОСОФИИ

Резюме

Философия отличается от мировоззрения тем, что она является не «практически-духовным», а теоретическим освоением мира. В этом плане она — не само мировоззрение, а форма его теоретического выражения и развития. Но, решая своими, теоретическими средствами мировоззренческую проблематику, и тем самым, поставляя общественному сознанию теоретически разработанные мировоззренческие знания, философия сама общественно функционирует как система мировоззренческих знаний, выполняет функцию теоретически разработанного мировоззрения, является способом теоретического развития мировоззрения, средством организации и обобщения системы научного знания в научное мировоззрение, форму общественного сознания.

С возникновением марксизма-ленинизма как теории и практики революционного переустройства мира в интересах трудящихся

масс, результаты научного философского познания становятся достоянием этих масс, выступают как теоретические средства формирования и развития у них научного коммунистического мировоззрения.

[1] Վ. Ի. Լենին, *Երկ, հ. 26, էջ 54—55։*
[2] К. Маркс, Ф. Энгельс, Сочинения, 2-е изд., т. 19, էջ 351.
[3] Ֆ. Էնգելս, *Անտի-Դյուրինգ, Երևան, 1967, էջ 31—32։*
[4] *Նույն տեղում, էջ 185։*
[5] К. Маркс, Ф. Энгельс, Сочинения, 2-е изд., т. 21, էջ 316.
[6] Վ. Ի. Լենին, *Երկ, հ. 24, էջ 320—321։*
[7] Ֆ. Էնգելս, *Անտի-Դյուրինգ, էջ 10։*
[8] Վ. Ի. Լենին, *Երկ, հ. 26, էջ 90։*